

ԲՆԱԳՐԱԳԻՏԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ՝

Պատմ. գիտ. դոկտոր Պ. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

«Բամբենցավ/բամբենցավ/բամբենցավ»

Վ. Ն. Բենեշևիչի համոզմամբ Անիի Մայր տաճարի արևմտյան պատին 1060 թ. Բագրատ մագիստրոս Վիկացու հրապարակած արտոնագրի քննախույզ ուսումնասիրությունը խոստանում է առատ արդյունքով հատուցել թափված աշխատանքը¹։ Մասնագետները, ևլիտի խոստովանել, այդ արդյունքից մաս առնենալու քիչ ջանք չեն թափել։ Հր. Բարթիկյանի վերջին լույս տեսած հոդվածում բավականաչափ հանգամանորեն և հիմնավոր կերպով անհերքելի պարզաբանվում է հիշյալ արձանագրության «շալակաւոր» տերմինը, որ մինչ այդ ընկալվում էր խեղճ Վեբերի «շալակաւոր», «շալակաւոր» բեռ ունեցող²։ Ըստ նոր լուսաբանության այն հունարեն «սակկուարիոս»-ի (քսակավոր, լումայափոխ, սեղանավոր, բանկիր) բառացի թարգմանությունն է³, և քանի որ «շալակաւորը» վկայված է նաև ավելի վաղ՝ Սմբատ Աշոտա որդի Բագրատունու 987 թ. Արուճի վիճագրում⁴, ապա հիշյալ ինստիտուտը նոր չէ և ոչ իսկ պայմանավորված կայսրության կողմից Անիի նվաճման փաստով։ Տուր և առի այս նշանավոր կենտրոնատեղին բնականաբար պիտի ունենար «սեղանավորի», «լումայափոխի» եկամտաբեր զբաղմունքով պարապող մարդիկ, որ այժմ ճանաչելի են դառնում «շալակաւորի» վերածանմամբ։ Բայց ի՞նչ է նշանակում արձանագրության բնագրում «շալակաւոր» տերմինին հարող և հավանաբար նրա ինքնությանը վերաբերող «բամբենցավ/բամբենցավ»-ը՝ «նւ շալակաւոր անցի բամբենցավ բաժին կէսն ազատ է»⁵։ Որևէ քննություն կատարելուց առաջ պիտի պարզել, թե գրականության մեջ առկա «բամբենցավ—բամբենցավ» ընթերցումից ո՞րն է իրապես բնագրական։ Պահպանված լուսանկարն ու գրչանկարը լիովին ստուգելի են։ Փորագրողը վրիպմամբ սկզբնատառը (Բ) բաց է թողել, բայց շուտով նկատել է այդ, և Բ գիրը փորագրել Անեճի և [] ԱՄԲԵՆՑԱՎ բառերի արանքում, տողի գլխին, բայց հարկադրյալ մյուս գրերից 2,5—3 անգամ փոքր։ Վրիպում է տեղի ունեցել նաև բառամիջում. ծավալուն ու հստակ ընթերցվող արձանագրության մեջ փորագրողը կցագրության կամ փակագրության ոչ մի հնչյւն չի կիրառել, բացառությամբ մեզ զբաղեցնող բառի Բ և է գրերի։ Պարզ է, որ կցագիրը վրիպումն ուղղելու արդյունք է, բայց դժվար է ասել՝ Բ-ն է է

* Նախորդ հրապարակումը տե՛ս.—«Պատմա-բանասիրական հանդես», 1991, № 1, էջ 140—144.

1 В. Н. Бенешевич. Три ангийские надписи XI в. из эпохи византийского владычества. СПб., 1921, с. 24.

2 Հ. Բարթիկյան. Բագրատունյաց Հայաստանի արհեստներից (Շալակաւոր՝ բեռնակիր, թե՛ բանկիր).—«Պատմա-բանասիրական հանդես», 1992, № 2—3, էջ 154—155:

3 Նույն տեղում, էջ 156—158:

4 Վեբերի հրատարակությունը տե՛ս Կ. Ա. Մաթևոսյան. Արուճ. Երևան, 1987, էջ 68 («...աղատեցի ... ղշալակաւոր ի բաժէ»):

5 Դիվան հայ վիճագրության. I, Երևան, 1966, էջ 37, լուսանկարը՝ տախտակ XII: Արձանագրության նախորդ հրատարակությունների մատենագիտությունը տրված է Ս. Ավագյանի և Հր. Բարթիկյանի այստեղ վկայվող չափով հոգովաներում:

ազդվել, թե՛ է-ն Բ, Հնարավոր է նաև երրորդ տարբերակ՝ է-ն կամ Բ-ն Դ է ուղղել: Քանի որ բառակազմում հենց Բ գիրն էր բաց թողել՝ հնարավոր է ԱՄԲԷՆՑԱՎ դրափոխված արտասանություն մակաբերել, ուղղված՝ ԲԱՄԷՆ-ՑԱՎ կամ ԲԱՄԷՆՑԱՎ: Իբրև որևէ օտար բառի գրադարձում (= ձայնադարձում) այս երկուսը էապես իրարից քիչ են տարբերվում, բայց հավասարապես վկայում են, թե փորագրողի համար օտարամուտ այդ բառը սովորական չէ և ոչ իսկ դյուրին արտասանելի (բառավերջում Ի-ի փոխարեն Վ ունենալը ևս վիժից արտասանությամբ ինչ-որ չափով հեռացող գրի ձայնադարձում է հուշում):

Մենք հնարավոր ենք համարում այստեղ պարսկերեն منصوف (monsef) տերմին ենթադրել՝ be կամ ba նախադրով, որ նրան պիտի հաղորդի հայցական կամ դործիական հոլովի կիրառություն: Եթե այս վարկածը հիմնադրվի չէ, ապա բառիմաստն է «արդար», «նշմարիտ», «իրավագատ», «երդվար», կիրառված տոումը՝ «արդարություն», «արդարապես», «արդարև», «հիրավի» ևն: Փորձենք իմաստավորել արձանագրության քննարկվող դերվազը՝ «նշ շալակաուր» (= սեղանաւոր) անհցի (= անհցին) բաժնեցավ (= սեղանաւոր) բաժնի (= բաժնի) էնսն (= կիսից) ազաւ էն: «Արդար սեղանավորի» կամ «արդար բաժնի» դուշմինը, հետևաբար և նրա իրավական ձևակերպումը, անտեղի չէ: «Սեղանավորներն» (սակկուարիոսներին) անպարտապահ բյուզանդացիները «հարկաւոր» պէի» (X դար) համաշխարհային պիտի թարգմանություն կամ ծանրագրության առիթով արձանագրել ևն դրամ կիզծող կամ վերահսկողությունից խուսափող (իմա պահանջվող պետական հարկը չվճարող) սեղանավոր-լուծայափոխներին առկայությունը բյուզանդական քաղաքներում (հասնավորապես Կ. Պոլսում)՝ Ենթադրվի է, որ այդպիսիք կարող էին լինել և բյուզանդական շքանի Անիում, ուստի կայսրության պաշտոնյան անհրաժեշտ է նկատել մասնավորեցնել խոսքը՝ արտոնափորը վերապահելով օրինապահ ճշակակաւոր-սեղանավորներին: «Բամբնցավ» օտարամուտ, սակայն ոչ բյուզանդական տեղմինը, եթե նրա իմաստավորումը աղբարացված է, կարող է նաև ապացույց ծառայել, թե Անիում «ոչ արդար» (ուրեմն՝ խարդախ) լուծայափոխ-սեղանավորներ կային բյուզանդական նվաճումից շատ առաջ: «Բամբնցավ/բամբնցավ/բամբնցավ» տառաշարքը առ այսօր համարվել է առեղծվածային:

«Տանուտություն»

«Տանուտներ» և «սանուտություն» տերմինները քաջ ծանոթ են հայագիտությանը՝ իրենց լայն ու նեղ առումներով, և նոր քննության անհրաժեշտություն չկա: Սակայն Մայր տաճարի վերոհիշյալ արձանագրության «Յորժամ առին գտանուտություն» կապակցությունը, ուր բառը գործածված է հոգնակի հայցականով և է՝ Ի սպասելի հնչյունափոխության հապավման նշան չկա, Հր. Բարթիկյանին մղել էր ենթադրելու, թե այս պարագային խոսքը վերաբերում է ոչ թե տանուտներին, այլ տան տուրքերին (տնահարկերին): Եվ քանի որ նույն Անիի մեկ այլ վիմագրում նման հարկ (պախտ տանց) վկայված է, նա «տանուտություն»—«սպախտ տանց» հարկերը նույն-

6 Աղբյուրի և գրականության վկայակոչությունը տե՛ս Հր. Բարթիկյանի հոդվածում, էջ 156—157:

7 «Ամեն ցաղ» և «Յամեն ցաղ» վերծանության փորձերը, հակառակ «ավելի հավանական թվալու» Ս. Ավագյանի գնահատությանը, չեն արդարանում ո՛չ գրչությանը և ո՛չ էլ իմաստով: Տե՛ս Ս. Ա. Ավագյան. «Տանուտություն» տերմինը Անիի XI դարի արձանագրության մեջ.— «Պատմա-բանասիրական հանգես», 1971, № 2, էջ 176, ծան. 5: Թերևս կարելի էր «Ամեն ցաղ» կարդալ, բայց առկա գրերը այդ չնչն հուշում:

նացնում էր բյուզանդական «էնիկիոն» հարկի հետ՝ Շատ շանցած՝ նման մեկնաբանության դեմ հանդես եկավ այժմ հանգուցյալ Ս. Ավագյանը և փաստեց, որ «առին զտանուտրութիւնս» նշանակում է «տանուտրութիւններն ստանձնեցին» վիճաբանում հիշատակվող «Մխիթար իպատոսն Կրտին որդին և Գրեգոր Լաւաւտակա որդին սպաթար կանկիտատն, և Սարգիս Արտաւազա որդին սպաթար կանկիտատն»։ Այդ է ապացուցում բնագրի հաշորդ հատվածում՝ «զայլն աւանաւէրքն առնեն» տերմինի հոգնակի գործածությունը։ Ս. Ավագյանն այնուհետև բերում է իր դրույթը հաստատող բազմաթիվ փաստեր ու նկատառումներ⁹։ Նրա եզրակացություններն ընդունել և որոշ մասնավորացումներ է կատարել Կ. Յուզբաշյանը։ Վերջինիս կարծիքով Անիի տանուտերերը մոտավորապես նույն պաշտոնն են կատարել, ինչ «մահմեդական» քաղաքների ռաիսները։ Նրանք տեղական ինքնակառավարման ներկայացուցիչներ են և իրենց վրա որոշակի տնտեսական խնդիրներ են վերցնում¹⁰։

Թվում է՝ հարցն այլևս պարզ էր, սակայն Հր. Բարթիկյանի նոր հոդվածում հին դրույթը վերստին կրկնված է. «Այդ «պախտ տանցը» չորս տարի անց (Ահարոն Բուլղարի 1056 թ. արձանագրությունից—Պ. Մ.), Բագրատ Վիկացու արձանագրության մեջ «հայացվել» է, դառնալով «տանուտրութիւն» (տուրք տներից)¹¹։ Ինչպես երևում է, եղած առարկությունները հեղինակը բավարար չի համարել, ուստի «տանուտրութիւն» տերմինի նշանակությունը մնում է վիճելի։ Փորձենք լրացնել Ս. Ավագյանի կատարած քննությունը։

ա) «Տանուտրութիւնն առած» երեք անձանց անվանական հիշատակությունը և նրանց «տանուտերքն» կոչելը անկանխակալ զնահատման դեպքում լիովին բավարար էին Անիում «արևելից կատապան» Բագրատ մագիստրոսին ենթակա «տանուտրութիւն»—«տանուտերերի» վարչական պաշտոնեական գոյությունը փաստելու համար։ Եթե կասկած հարուցողը նրանց մեկից ավելի լինելն է («զտանուտրութիւնս»), ապա Ս. Ավագյանը արդարացիորեն նկատել է, թե նրանցից յուրաքանչյուրը կարող էր քաղաքի պատմականորեն ձևավորված երեք թաղամասերից մեկի կառավարիչը (իշխանավորը) լինել¹²։ Եվ հիշել, որ դոնե մոնղոլական տիրապետության շրջանից մեծ քաղաքում մեկից ավելի տանուտերերի՝ իբրև պաշտոնյաների հիշատակություն ունենք։ 1238 թ. Վանական վարդապետը «ի Տփղիս քաղաքի» գերությունից ազատում է «ի Տաւրշոյ ի Մուզան» տարած Ավետարանը, «զոր փառաւոր աւագէրէց Սարգիս հասարակ պատուական քահանայիւր և աւանաւածաւէր ժողովրդական տանուտէրաւ բազում ծախաւր և աշխատութեամբ զընեալ ետուն ի մեզ»¹³։ Թիֆլիսը ևս ինքնակա թաղամասեր ունեցող քաղաք էր,

⁹ Р. М. Бартикийн. «Эникион» в Византии и столице армянских Багратидов Ани в эпоху византийского владычества (1045—1064 гг.)—Историко-филологический журнал, 1968, № 2, с. 126.

¹⁰ Ս. Ավագյան. նշվ. աշխ., էջ 175—190, վերահրատարակությունը տե՛ս հեղինակի «Վիճաբանական պրպտումներ» գրքում, Երևան, 1986, էջ 26—45.

¹¹ К. Н. Юзбашьян. Армянские государства эпохи Багратидов и Византия IX—XI вв., М., 1988, с. 199—200. Он же: К истолкованию надписей византийских правителей Ани (XI в.).—Кавказ и Византия, вып. 6. Ереван, 1988, с. 77—78.

¹² Հ. Մ. Բարթիկյան. Բագրատունյաց Հայաստանի արհեստներից, էջ 153: Հեղինակը հարկ չի համարել հիշել Ս. Ավագյանի վերահիշյալ աշխատությունը.

¹³ Ս. Ավագյան. Վիճաբանական պրպտումներ, էջ 34—35.

¹⁴ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց Ա. Ս. Մաթևոսյան. Երևան, 1984, էջ 203: Հիշատակարանի նախորդ հրատարակությունն ու աղբյուրն են Բարձրանությունը տե՛ս С. В. Тер-Аветисян. Автограф Иоанна (Ованеса) Ванакана Таушского, армянского писателя монгольской эпохи.—Известия КИАИ, Тифлис, 1926, № 52—53.

որոնց տանուտերերն էլ (թերևս «ժողովրդական» կոչելը նրանց ընտրովի լինելն է մատնացուցում) մասնակցել են փրկագնմանը (Ս. Տեր-Ավետիսյանը «ժողովրդական» թարգմանում է «ПРИХОДСКИМ»՝ «ծխական», որ դարձյալ թաղերին է վերաբերում)։ Բագրատ մագիստրոսի արձանագրության «առին զտանուտերութիւնս» արտահայտությունից դժվար է եզրակացնել «առին» ասելով «ընտրություն» է հասկանում, թե՛ «ստանձնում»։ Համեմայն դեպս՝ նրանց պաշտոնյա լինելը կասկածից դուրս է։ Կան և այլ օրինակներ։

բ) Ս. Ավագյանը ցույց է տվել, որ կապալառուական կարգը վերաբերում է միայն պետական հարկերի ու տուրքերի զանձմանը, բայց ոչ երբեք կոռեբին ու պարտույթներին¹⁴, իսկ Բագրատ մագիստրոսի վիճադրում տանուտերերը «աղատեցին զվեցկէ կող և զմայլի, և զկամին, և զանգարիոն», որոնք հարկ կամ տուրք չեն, ինչպես որ այդպիսին չեն նաև այդ նույն տանուտերերին հանձնարարվող, հնձելուց հետո կատարվող մյուս աշխատանքները («զայլն տանուտէրքն առնեն»), որ են՝ կալսել, աղալ և այլն։

Տանուտերերի թե տանուտրության ինստիտուտի հետ կապված հարցեր քննարկելիս ուշագրավ տեղեկություններ կարելի է քաղել վրաց Բագրատ IV թագավորի՝ 1054—1072 թթ. տված մի հրովարտականից, որ պահպանվել է բնագրով¹⁵։

Միջնաձորցի և օպիդցի վանականների միջև ծագած կալվածքային վեճը լուծելու համար Բագրատ IV-ը հավաքում է հոգևոր ու աշխարհիկ բոլոր մեծավորներին, լսում վիճող կողմերին, զննում վավերագրերը և վիճարկվող անտառներն ու սահմանները թողնում միջնաձորցիներին (բնագրում՝ միջնաձորոբնին)։ Ձեռք առնելով, որ օպիդցիներին էլ գոհացում տամ՝ հազոթս իմ հոգու ինքյան հանձնառու եղա. մեր տանուտրական (սամամասախլիսո) ծառայությունից վերցրի Բարեան գյուղը և տվեցի օպիդցիներին՝ ի սեղանս։ Այնուհետև թագավորը հանձնարարում է. «Արդ, ով էլ տեսնի մեր սույն հրամանն ու հրովարտակը՝ մեզանից հետո գալիք թագավորներ, էրիսթավաց էրիսթավներ, էրիսթավներ, Տայքի (Տաույի) և Կղարջքի (Կլարջեթի) տառնուտերեր (տանուտեր-թա) և ամենայն իշխանավորներ և գործավորներ, հաստատեցեք և ոչ ոք ձեռք զարկեք սույնը խախտելուն ու փոփոխելուն»։

Այլևս պարզ է, որ Բագրատ մագիստրոսի վիճադրի հրապարակման տարիներին տառնուտերեր կային ոչ միայն Անիում, այլ նաև Տայքում ու Կղարջքում, ինչ որում նրանք իշխանավորներ էին (ոչ հարկահավաքներ), ավատատիրական վարչա-կառավարչական մարմնի միջին կարգի պաշտոնյաներ։ Հետաքրքիր է, որ թագավորն ինքն էլ որոշ տարածքներում տանուտրական իրավունքից է օգտվում, ու նաև այդ բնակավայրերը նրան ոչ թե հարկ կամ տուրք են վճարում, այլ ծառայությամբ կատարում իրենց պարտույթը։

Պակաս ուշագրավ չէ XII դարի առաջին կեսի էրիսթավաց էրիսթավ Բեշքենի արտոնագրում եղած հաղորդումը. Կորիդեթի վանականներին նա ազատում է «տանուտրական դրամից» (սատանուտրոի դրամաի), «ինչքան էլ այն կազմի»¹⁶, Տասնամյակներ անց նրա թոռ Բեշքենը անհրաժեշտ

¹⁴ Ս. Ավագյան. նշվ. աշխ., էջ 39—40։

¹⁵ Գիտական նորագույն հրատարակությունը և բնագրին վերաբերող գրականության մասնագետները աշխ. «ქართული ისტორიული საბუთები (X—XIII სს.)», შეადგინეს და გამოაცემეს მოამზადეს თ. ვნუქიშვილმა, ვ. სლოვაკიამ, ნ. შოშიაშვილმა, თბ. 1984, გვ. 32—34: Մույն վավերագրի վերջին տեսակներն թարգմանված են աշխ. «Грузинские документы IX—XV вв. в собрании Ленинградского отделения Института востоковедения АН СССР. Перевод и комментарии С. С. Какабадзе. М., 1982, с. 36—38.

¹⁶ «ქართული საბუთები» (X—XIII სს.), გამოცემულია მოამზადეს ვ. სლოვაკიამ, თბ., 1989, გვ. 24. ზამა. Н. Я. Марр. Грузинские приписки греческого Евангелия: из Коринтии.—Известия ИАН, 1911, № 4, с. 226.

է նկատում վերստին հավաստել, որ Կորիդեթի բոլոր վանականներին ինքը ևս ազատել է «տանուտրականից» (սատանուտրոյ), իսկ «թե՛ս վանականը տանից բացակայի և աղոթքի չկարողանա գնալ՝ «տանուտրական (սատանուտրոյ) վճարի»¹⁷։ Ուրեմն տանուտրոյի օգտին սահմանվող պարտույթը կարող էր փոխարինվել և դրամով։ Այս դեպքում տանուտրական իրավունքից օգտվում է բարձրաստիճան ազնվականության ներխուժացուցիչը՝ ժառանգաբար։ Այստեղ կարևոր է թե՛ հոգևորականության հարկման փաստը և թե՛ այն, որ համապատասխան ծառայություն կատարել չկարողանալու պատճառով (հարկավ՝ գյուղատնտեսական աշխատանք) այդ դասի պարտույթը փոխարինվում է դրամով։ Իսկ որ Կորիդեթցիների պարտականությունը եղել է ցանելը, քաղելը, հավաքելը և կալսելը՝ պարզ երևում է այդ նույն Բեշքեն կրտսերի մեկ այլ հիշատակագրությունից, ընդ որում այս անգամ խոսքը վերաբերում է ողջ գյուղին, որի հանդեպ մեղք է գործել էրիսթավը՝ իր պետքի թելադրանքով գյուղի պարտույթն ավելացնելով, որից այժմ վերստին ազատում է¹⁸։ Պարզ է, որ խոսքը նույն «տանուտրությանն» է վերաբերում։

Թյուրիմացության տեղիք շտալու համար ավելացնենք, որ վրացական աղբյուրների «սամամասախիսո», «սատանուտրո» տերմինները բառացիորեն նշանակում են «սամասախիսին տրվող», «տանուտրոյին տրվող, հատկացվող» հարկ կամ պարտույթ, բայց ոչ երբեք «հարկ տանց», «տնահարկ», այլապես պիտի մտածել, որ Վրաստանը նվաճած թաթարներն էին վրացիներին վճարում «սաթաթրո» հարկը և ոչ հակառակը։

գ) «Տանուտրությունը» տանու տուր(ք) վերծանելիս Հր. Բարթիկյանը շեշտում է նրանում հապավման նշանի բացակայությունը։ Եթե նույնիսկ համաձայնենք, որ XI դարում դրության ու արտասանության միակ ընդունված ու ճիշտ ձևը «տանուտրությունն» էր, ապա պիտի հիշեցնենք, որ Բագրատ (Բագարատ) անձնանվան սեռական հոլովը Բագրատայն է և ոչ Բագրատան, ինչպես կա վիմագրում և դարձյալ առանց հապավման նշանի, ուրեմն պիտի ճանաչել դրի նախասիրությունը կամ գուցե և գրագիտության աստիճանը (վիմագրում կան բազում ալլագրություններ ու շեղումներ)։ Բայց մենք հակված ենք կարծելու, թե «տանուտրություն» գրելիս գրիչը չի թերացել, այլ պարզապես նա արձանագրել է իր միջավայրին ընտանի արտասանությունը։ Որ «տանուտրությունը» կարող էր արտասանվել ու գրվել «տանուտրություն» փաստվում է դարձյալ վրացական վավերագրերի բովանդակած նյութով։ Կորիդեթյան հունական նշանավոր ավետարանի XII դարի լուսանցազիր վրացերեն նվիրագրում կարդում ենք. «Գրվեց Հովհան (Թովանե) Փաշունեթի կառավարչության՝ Կորիդեթի Խաղաղության (տանուտրոբասա) օրոք»¹⁹։

Այսպիսով, «տանուտրություն» տերմինը վարչական բովանդակություն ունի և անկարելի է նրան այլ վերծանություն պարտագրել։

* * *

«Տանուտէր», «տանուտրություն» (տանուտրություն) տերմինը, ինչպես կարելի էր հավաստիանալ բերված օրինակներից, XI դարից սկսած գոր-

¹⁷ Նույն տեղում, էջ 30. Հմմտ. Н. Ма р р. Указ. соч., с. 228.

¹⁸ Նույն տեղում, էջ 29. Հմմտ. Н. Ма р р. Указ. соч., с. 233—234:

¹⁹ Վերջին հրապարակությունը աե'ս „გაბაგდგონის სიბუთგბო“, გვ. 43—44. Գրքի 22-րդ տախտակում տպված է վավերագրի լուսանկարը, ուր մեզ հետաքրքրող տերմինը գրքված է «տանուտրոբասա» (նուխուրի գրության ու-ն «ա»-ի և «ս»-ի համագրում էր, ուստի հաճախ գրի առաչին բաղադրվել է գրվում, բայց կարգացվում է «ու»)։ «Տանուտրոբասա» (տանուտրություն) է փորագրված եղել նաև Տաճոտ գյուղում Ն. Մառի գտած վրացերեն արձանագրության մեջ (XIV դար)։ См'ю Н. Ма р р. Архив, монгольское название христиан, в связи с вопросом об армянах-халкедонитах, СПб., 1905, с. 24.

ծածական էր նաև Վրաստանի հարավ և հարավ-արևմտյան գավառներում, ուստի Պետրիծոնի վանքի «Սահմանքի» հունարեն խմբագրության տեղեկությունը, թե «կկարդիր» վրացիները «տանուտեր են կոչում» անսպասելի չէ²⁰։ Դարասկզբին Ն. Մառը բավական հանգամանորեն քննության էր առել այս փաստը²¹, սակայն խնդրը մասամբ բարդացավ հիշյալ «Սահմանքի» վրացական խմբագրության երևան գալով։ Հունարենի «տանուտերի» դիմաց, իբրև «կկարդիր» համապատասխանություն, այստեղ ունենք «օստիգանի» (օստիգան)²²։ Տողերիս հեղինակը ժամանակին կարօթ է հայտնել, թե բնագրային ու նախնական հունարենի «տանուտերն» է (իսկ «օստիգանը»՝ հետագա միջամտության արդյունք)²³։ Գրիգոր Բակուրյանի ինքնության և նրա «Սահմանքի» վրացերեն բնագրի ուսումնասիրության կապակցությամբ «տանուտեր» և «օստիգան» տերմինների առնչությանն անդրադարձավ ակադ. Ա. Շանիձեն²⁴։ Նրա համոզմամբ՝ «տանուտեր-տանուտիրություն» ինստիտուտը քաղաքացիական-վարչական բովանդակություն ունի և անհարիր է վանական միաբանության «կկարդիր» — «մառնապետի» պաշտոնավարությանը, ուստի հետաքննելով հունարեն բնագրում, իսկ նախնական «օստիգանն» է։ Անհասկանալի է, սակայն, ինչու նույնքան աշխարհիկ-քաղաքացիական «օստիգանը» կարող էր տրանսֆորմացիայի (բովանդակփոխության) ենթարկվել և վանական պաշտոնյա դառնալ, իսկ «տանուտերը»՝ ոչ։ Եվ ապա՝ վաստակալատ գիտնականի ուշադրությունից վրիպել է 1281—1282 թթ. Քարթլի կաթողիկոս Նիկողայոսի արտոնագիրը, որով Մցխեթի Շեուբանը (բառացի՝ Ներքին թաղ) նախկին տիրոջ՝ Արվանբեգ Սաբայի որդուն, վերադարձնելիս. վճռում է. «Շեուբանի վրա կար հին բեգարը՝ տամնեկ լիտր մոմ, նրա վրա ինը լիտր ևս ավելացրինք և դարձրինք քսան լիտր՝ նախկինում եղած լիտրի հետ միասին։ Քեղ տվեցինք Շեուբանը, ժառանգեցեք սույնը կատարելու պարագայում՝ որ ամեն տարի ավագ հինգշաբթի այս ֆառ լիտր մոմը Սախլոբանի մեջ տանուտերին (տանուտերս) տրվի ու հաշվվի»²⁵։

Այստեղից դժվար չէ եզրակացնել, որ Շավշեթի Սախլոբանի գյուղում կաթողիկոսն ուներ իր «տանուտերը», որի պարտականության մեջ էր մտնում կաթողիկոսապատկան «բեգարի»՝ քսան լիտր մոմի՝ «գանձումը»։ Հարկավ չպիտի զարմանալ՝ եթե Պետրիծոնի վանքի պարենային խնդիրները (հաց, կաթնեղեն, յուղ, մեղր ևն) վարող «կկարդիր» ևս «տանուտեր» հորջորջվել և թերևս վանական միաբանության անդամ լինելու։

Վանական հաստատության վարչական կազմում «տանուտերի» ներկայությունը հաստատվում է նաև խմբագրության արևելյան պատին Անիի և Շիրակի արքեպիսկոպոս (XIII դարի առաջին քառորդ) Ապուղամրի որդի Գրիգորի հրապարակած նվիրագրով։ Վիմագրի ավարտամասում իբրև հի-

²⁰ «Զեդգուդ». Ե. V. տ. 1963, թ. 152 (հունարեն), 153 (վրացերեն)։ Նույն Կ. Գրիգորիա Սախլոբան. Введение, перевод и комментарий В. А. Арутюновой-Фиданян. Ереван, 1978, с. 87.

²¹ Н. Ма р р. Указ. соч. с. 22, 24.

²² Հին վրացերեն բնագրի ու նրա հունարեն թարգմանությունը տե՛ս օգոգո Մանուկ, լատիներեն թարգմանությունը և Միսի Գրիգորի, տ. 1, 1971, թ. 82 (վրաց.), 275 (հուն.)։

²³ «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 1, էջ 110։

²⁴ Ե. Մանուկ. Գրիգորի տեղեկությունը «Շեուբանի» մասին, 1970, № 6, թ. 161—166։ Նույնի Великий домострой Запада Григорий Бакурианис-дзе и грузинский монастырь, основанный им в Болгарии. Тбилиси, 1970, с. 31—40. Օ ն ж е: Գրիգորի տեղեկությունը Շեուբանի մասին, թ. 29—33, 267—273. Օ ն ж е: О строителе Петридонского монастыря Григория Бакурианис-дзе, — «Մանուկ» (սեպտ. հոկտ.), 1978, № 4, թ. 173—174.

²⁵ «Վրացական օրագրությունը և թղթերի լույսը», թ. 178.

շատակագրություն կարգում ենք. «Ջերջանիկ հայր զԱռաքելին և զԹառնու-
ախի զԳրիգորիանոսի Թառն զՌուբեն յիշեցէք ի Քրիստոս»²⁶. Վանահոր հետ
միասին հիշատակվող «արդիւնարար տան» տանուտեր Ռուբենը վանքի տըն-
տեսությունը վարողն է, երկրագործական աշխատանքները վերահսկողը,
զուցե նաև ծախսարարն ու պարտույթների վերակացուն: Ուրեմն՝ հիշվի.
Պետրիժոնի վանքում «տանուտերի» ներկայությունը պատահական չէ, և հիմ-
քեր չկան հունարեն խմբագրության այդ հատվածում հետագա միջամտու-
թյուն ենթադրել²⁷:

ТЕКСТОЛОГИЧЕСКИЕ ЗАМЕТКИ

Доктор ист. наук П. М. МУРАДЯН

Резюме

В надписи византийского правителя г. Ани Баграта магистра Вхакци от 1060 г. термин «шалакавор» сопровождается непонятным словом «бамэнцав» (или «бамбэнцав/бамынцав»). Нами высказывается предположение, что тут налицо транскрипция или транслитерация персидского юридического термина *monsef* (справедливый, настоящий, истинный, т. е. законный) с показателем винительного падежа *be* (или творительного—*ba*). Если это так, то в надписи говорится о «банкирах», «законно» «истинно» занимающихся своей профессией, т. е. выплачивающих определенную дань городской администрации. В специальной литературе дискутируется вопрос о содержании термина «танутрутюн» из той же надписи. Нами приводятся новые материалы, взятые из древнегрузинских источников, которые разрешают спор в пользу административного значения термина—танутэр—«господин дома»—староста, правитель, «танутрутюн»—правление, управа. В статье приводятся новые данные, свидетельствующие о подлинности термина «танутэр» в «Типике» Григория Бакуриана.

²⁶ Ղ. Ա ի ղ ա ն. Շիրակ. Վեներիկ, 1881, էջ 165:

²⁷ «Տանուտեր» եզրի ուշ միջնադարյան կիրառության վերաբերյալ տե՛ս Ղ. Ս. Խ ա ղ ի կ-
յ ա ն, 14—15-րդ դարերի հայկական դյուղական համայնքի մասին, ՊՐԶ, 1958, № 1, էջ
113—114: